47. ՄԵԾԱՄԻՏ ԹԱԳԱՎՈՐ

Թագավորըմ կէղնի։ Օրըմ կնստի ուր քոշկ ու սարի մեշ ու ինքն ուրեն կմեծամտի։ Կասե. «Աստված ընծիկ ի՞նչ կառնա էնե, ես զաթի արևելոց, արևպատ տիրեր իմ, շատ-շատ պիտի հ՝ելնի ազգըմ, հանե վըր ընծիկ, զէն լե հոգ չըմ էնի, իմ խազինեք հըմալ լցուկ ին, կլնամ բերան ուրանց, զէն ուրանց կկտրեմ»։

Էղ օր թագավոր օր կմեծամտի, ուր բաղնեկ էրթալու օր կէղնի։ Կասե ու կելնի, կէրթա բաղնեկ։ Բաղնեկ կէրթա, կլողկընա։ Քիչըմ կշոգվի, կելնի գրսու բակ օր հովի։ Քուն կբռնե։ Կթալե զգլուխ, պառկի։ Օր կպառկի քնի, ամենակալն աստված ուր հրշտակին հրաման կէնե, թե. «Հ՝իշի, գնա ֆլան բաղնեկ, թագավորըմ կա էնտեխ, կմտնիս էն թագավորի խըլըղ, կելնիս, կէրթաս նստիս վըր էնդոր թախտին, կէնիս թագավորութենն»։

Հրեշտակն ամենակալին կիշնի կիգա։ Այնան էդ թագավորի սիֆաթով կլողկընա։

Օր կլողկընա կխըլըսի, զանգ կիտա, բաղնեպան կիգա, կբերե փեշտմալ, կէլնի կէրթա էդ թագավորի շորերու վրեն կնստի, կշորցու զինք, կէլնի զուր հալավ կհագնի, կանչե զուր սեխս, կճամբե բերե զձին, կհեծնի կիգա, կնստի վըր ուր թախտին։

Թագավոր կմնա հըմալ տկլոզ, բաղնեց մեշ քնուկ։

Կես գիշեր կէղնի։ Թագավոր կախըլի, կիշքե կտեսնա օր ուր տեխ մութ է։ Կասե. «Ջանըմ, ես հ՝ու՞ր իմ»։

Կիշքե կտեսնա, օր հանդե, մեջ բաղնեց։

Ինքն ուրեն կասե. «Հա՜յ-հա՜յ, ես ինչ խրտար իմ քնի։ Քներ իմ ու մանցի քնուկ»։

Կհասնի, զանդ կիտա, օր բաղնեպան հ'իգա։ Օր զանգ կզարկե, բաղնեպանները, կասին.—Էդ ի՞նչ է մըր բաղնեց մեջ, մըր թախմնով մարդիկ հ'ըմեն հ'ելան գացին, սորա մենք էկանք պառկանք, քնաք»։

Էն մեկն կասե— Կարելի է չարերն ին, էկեր ին, կոլըրտին ու կէրթան, խստու զանդ կքաշին օր մենե մեկ հ'ելնի էրթա, բռնին, առնին էրթան։

Կելնին բաղնեց փեշտմըլներ կպլուլին, կէնին պըլատիկ, կառնեն ձեռք ուրանց ու կէրթան։

Կէրթան կտեսնան օր չիբլախ սատանե մը կա էդտեխ։

Էն մեկն կասե— Կիղի, սատանա է, զարկեք։

Կզարկեն։

Թագավոր կասե.—Ցամա՜ն, մը զարկեք, ես ձըր թագավորն իմ։

Բաղնեպանները դըհա կզըլին.—Կիդի զարկեք, սուտ կասե, կխաբե, օր թողինք էրթա։

Կզարկին, կտանին էն պատ, կբիրեն էն պատ. ճար կկտրի, կմիամցու, կբանա դուռն ու կփախնի, կելնի դուրս։

Դուրս օր կելնի կփախնի, կէրթա կմտնի գուլխընի մեջ։

Էն գուլխընի դեմ լե խահվախանե մը կէղնի։

Լուսն օր կբացվի վըր ձըզիկ ու վըր հազրներուն, գուլխընի դուռ բաց կէղնի, կիշքե օր էդ խահվախանու աշկերտներ ձեռք ուրանց մեկ-մեկ խուշխանա կերակուր ու էկան մտան ներս։

Էկան մտան ներս ու հ'իրարու կասին.—Մըր թագավոր սահմի էկեր է, թալալ է տվի կանչել, օր մարդ ուր տուն հաց չուտե, խեյրաթլամա բացվեր է, ամեկ մարդ թըղ առնե զուր աման, հ'իգա հ'ըլնա, էրթա։

Զէդ օր կլսե, էդ թագավոր, կասե. «Վալայի, իմ տեխ ուրիշ մարդ ին դրած թագավոր, էլ ճար չկա, հ'ելնամ էրթամ, խառնվիմ էդա խահվաճու աշկերտներու հետ, էրթամ բիրեմ բա մը լե ընծի, ուտիմ, անոթից չմեռնիմ»։

Կելնի կիգա, օր ուրեն զատ տանե, կտեսնա, օր խահվաճու աշկերտներ մատ կխտին հ'ինք, կասին.—Էդա չիբլախն ի՞նչ է, էկավ նստավ. մըր հաց կուտե։ Հ'ելի գնա, ֆլան տեխ թագավոր խեյրաթլամա բացեր է, առ քզիկ զատ, գնա նստի տեխըմ, կի։

Կելնի կիգա խեյրաթլամի տեխ, թագավորի սարեսներու հ'առեջ կէղնի։

Կասե.— Զըր թագավորի սադաղեն էղնի, քիչըմ հաց լե ընծիկ տվեք, ուտիմ։

Հրեշտակն ամենակալին փանջարից կտեսնա, օր էդ թագավոր չըբ-լախ էկեր է, կայնի խեյրաթլամի տեխ, ձեռք հ՝երկնցուցեր է, կասե. «Քիչ հաց լե ընծիկ տվեք, տանեմ ուտեմ, անոթից չմեռնեմ»։

Մարդըմ կճամբե, կասե.—Զէնա տըկլոգ ախքատ կտեսնաս, զնա առ ու էկո, ասե՝ զքզիկ թագավոր կկանչե։

Խուլըմներ կիգան, կբռնեն զէդ չիբլախ մարդ, կասին.—Քելե, էր-թանք, թագավոր զքզիկ կկանչե։

Կասե.— Վալայի, թագավոր կտանե զիս, զիմ գլուխ կզարկե։

Կընկնի հ՝առեշ ուրանց, կիգա։

Կիգա թամանա կէղնի, կկանի։

Թագավոր կասե.— Հ՝էսօր էդա խըտար մարդ էկան, առան ուրանց հաց, գացին, մեկ տկլոզ չէր, դու ի՞նչ մեղք իս էրի, օր հըմլա տկլոզ իս։ Զօղորթ չասիս, զքու գլուխ կիտամ զարկել։

Կտեսնա օր էլ ճար չկա։ Կասե.

— Թագավոր ապրած, քենե պահեմ, աստծուց ի՞նչ պահեմ, երեկ էդա թախտ լե իմն էր, մեծամըտա վըր աստծուն, ասի. «Աստծուց լե փաքեմ չըմ քաշի, արևելոց, արևպըտոց իմ հողերն ին, աստված ի՞նչ պիտի էնե ընծիկ, շատ-շատ ինատ էնե, թագավորըմ պիտի հանե վըր ընծիկ, խա-ղինեքս լիք օսկի ին, կթալիմ բերան ուրանց, կազատեմ»։ Մեծամտա, հ՝ելա գացի բաղնեկ, պառկա քնա, հ՝իմնամ օր գիշեր է։ Զանգ տվի, բաղնեպներ էկան, պըլատիկ ձեռք ուրանց, զարկ հա՛ զարկ։ Քանի ասի՝ ջանըմ, ես ձըր թագավորն իմ, անկաճ չէրին, քանի օր պիտեր զար-կեցին, ճարս կտրավ, փախա գացի մտա գուլխան։ Գուլխանի դեմ խահվա-խանե մը կեր, տեսա օր խտհվաճու աշկերտներ բերեցին ուրանց զատ, կուտեն։ Ասին՝ թագավոր խեյրաթլամա բացեր է, հ՝ելա էկա օր քիչըմ հաց լե ընծիկ առնեք, ուտենք։ Էկա, դու տեսար, կանչիր բերիր։ Օղորդն էդա է։

Հրեշտակն ամենակալին ասեց.— Օր զքու թախտն դառցում իտամ քի, հեղըմ լե աստծու դեմ կկանիս, հակաճառի՞ս։

Կերդըվի, կասե.— Ահտ ու խըրատ էղնի, օր հեղըմ լե լու չխըռտը-ցում, աստծու ստեղծածին բելա կյուլտան ախըր չըսիմ։

— Օր հըմալ է, էդա քու թախտ քզի,— Կասե հրեշտակ ու կհամ-բառնա։

Թագավոր շուքը կիտա ուր աստծուն, կելնի, կհագնի զուր հալվը-ներն ու կնստի վրը ուր թախտին։ Օր կնստի վրը ուր թախտին, կբերե կբանա զուր խազինեք ու թալալ կիտա կանչել, էկեք ու տարեք։

Քաղաք քաղքով կթափեն ու կիգան, մրոջրման պես կկրեն ու կտա-նեն։ Ախբր էդոր դոլվրթին վերջ չի գա, քանի կէրթա կէվելնա, աստծու բարաքեն կընկնի ուր մեջ։